ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ:

Տնօրեն՝ /Ա.Գևորգյան/

«31» «օգոստոս » 2023 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

« Սիսիանի համար 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

ուսումնական հաստատության անվանումը

4 -րդ դասարան

դասարան

Բաղդասարյան Նարինե Վաչագանի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

2023-2024 ուստարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

4-րդ «բ» դասարանում սովորում են 17 աշակերտ՝ 6 աղջիկ, 11 տղա։Դասարանում ձևավորված է համերաշխ, առողջ, կարգապահ կոլեկտիվ։Աշակերտները միասնական են, համերաշխ, զիջող, հանդուրժող։ Ընդհանուր առմամբ աշակերտներն ունեն բավարար ընդունակություններ։ Կա մեծ պատասխանատվություն և վերահսկողություն, որ աշակերտները լինեն պարտաճանաչ, պատասխանատու և դաստիարակվեն որպես լավ մարդ և լավ քաղաքացի։ Դասարանում կան նաև թույլ կարողություններ ունեցող երեխաներ, որոնց հետ տարվում է լրացուցիչ աշխատանքներ։ Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ։ Դասարանում տիրում է առողջ մթնոլորտ։ Ընկերասեր են, կամեցող, ինչը նկատվել է առաջին իսկ օրվանից։Նրանցից յուրաքանչյուրը գիտակցում է թե՛ իր իրավունքները, թե՛ իր պարտականությունները։ Դասարանում կան երաժշտասեր, պարային և սպորտային խմբակներ հաճախող երեխաներ։ Ամենօրյա և հետևողական աշխատանքի շնորհիվ պետք է ամրապնդել կոլեկտիվի ձեռքբերումներն ու հասնել հաջողությունների։

Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխաանքները

- զրույցների, միջոցառումների միջոցով բարձրացնել աշակերտների հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական և աշխատանքային դաստիարակությունը։
- Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը։
- Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը։
- Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին, որպեսզի շտկել այդ թերությունները։
- Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն)։
- Անձնական օրինակով սովորեցնել պատասխանատվության զգացում։
- Ուշադրության կենտրոնում պահել հետ մնացող աշակերտներին։
- Պարտադիր ուսուցման գործընթացի իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին, ծնողական և դպրոցական խորհուրդներին։
- Ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ։
- Աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն, նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և

հպարտություն,դաստիարակության հիմքում դնել հիմնական դպրոցի շրջավարտի նկարագրի պահանջ:

- Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ և այն ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին:
- Հետևողական աշխատանքի միջոցով հնարավորինս նվազեցնել անհարգելի բացակայությունները:
- Կիսամյակը 1-2 անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողովներ:
- Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ- դպրոց-ընտանիք կապը:
- Ծնողների համար կարդալ մանկավարժական զեկուցումներ, անցկացնել սեմինարներ, քննարկումներ:
- Յուրաքանչյուր դասարանում ստեղծել ծնողխորհուրդ /բաղկացած 3-5 հոգուց/ ապահովել ծնողխորհրդի մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը, միջոցառումներին:
- Պետական և ազգային տոների, միջոցառումների, հանդիպումների, այցերի կազմակերպում:
- Ակտիվ մասնակցել «Մաքուր Հայաստան» ծրագրին՝ մասնակցել և դպրոցական և քաղաքային շաբաթօրյակներին:
- Դասերը անցկացնել աշակերտակենտրոն ուսուցմամբ, որի շնորհիվ կզարգանա նաև բազմաբնույթ մտածողությունը, աշակերտները ձեռք կբերեն ինքնուրույն աշխատելու, մտածելու կարողություններ:
- Ուսումնական տարվա ընթացքում կայցելեն թանգարաններ, տարբեր տեսարժան վայրեր, կանցկացվեն տարաբնույթ էլեկտրոնային դասեր, որոնք իրենց մեջ կունենան և՛ ուսումնական, և՛ դաստիարակչական բնույթ:

Հայեցի դաստիարակություն

Հոգևոր դաստիարակություն

Աշակերտներին ծանոթացնել եկեղեցական տոներին: Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը, ծանոթացնել եկեղեցական ծիսակատարություններին:

Գեղագիտական դաստիարակություն

Սովորողներին հնարավորություն տալ ազատ մտածել, ստեղծագործել: Զրուցել արվեստի մասին, դիտել ֆիլմեր, ունկնդրել երաժշտություն: Սովորեցնել գնահատել շրջապատի գեղեցկությունը, գնահատել գեղագիտական արժեքները, բարին և ճշմարիտը: Յուրաքանչյուր երեխա պետք է տեսնի և զգա իր շրջապատի գեղեցկությունը, գնահատի այն:

. Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Քաղաքակիրթ մարդու առաջին արժանիքը հայրենիքի հանդեպ սերն է: Աշակերտներին սովորեցնել հայրենասիրական երգեր, անցկացնել դասեր

հայրենիքի, հայոց բանակի, դրա կազմավորման վերաբերյալ։Պետք է հարգեն իրենց երկրի խորհրդանիշները, լինեն հայրենասեր, կարևորեն ազգային հիմնախնդիրների լուծման գրագետ ուղիները։

Ֆիզիկական դաստիարակություն

Կրթության անբաժանելի մասն է ֆիզիկական դաստիարակությունը: Կարևորել սպորտը և դրա նշանակությունը մեր կյանքում։Կազմակերպել տարբեր սպորտային խաղեր, կազմակերպել մրցույթներ։ Պատմել նշանավոր մարզիկների մասին։ Երեխաներին սովորեցնել առողջ ապրելակերպի կանոններին։ Խորհուրդ տալհաճախել սպորտի։

Աշխատանքային դաստիարակություն։

Աշակերտների մեջ ձևավորել աշխատանքի և աշխատավոր մարդու նկատմամբ դրական վերաբերմունք։Աշակերտներին ներգրավել դասարանական տարբեր աշխատանքներում, որպեսզի սեր առաջանա դեպի աշխատանքը, աշխատավոր մարդը։ Երեխաները պարտավոր են իրենց տարիքին համապատասխան աշխատանքներ կատարեն տանը, դպրոցում: Այն պետք է սկսել դասասենյակի մաքուր և կոկիկ պահելու պահանջից: Հասնել նրան, որ նրանք գիտակցեն և արժեվորեն իրենց կատարած աշխատանքը:

Բնապահպանական դաստիարակություն

Բնությունը հրաշք է իր բնական երևույթներով։ Անհրաժեշտ է օգնել աշակերտներին՝ տեսնել, հասկանալ և գնահատել այն։ Բնությունից մարդը շատ բան է վերցնում, բայց պետք պահպանել և ուշադիր լինել։ Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է: Բնության հետ շփումը նպաստում է բարոյական, դրական որակների ձևավորմանը։

Դպրոց-ընտանիք կապը

Շատ կարևոր է ապահովել դպրոց-ընտանիք կապը։Եթե ծնողն ու դպրոցը հաջողությամբ համագործակցեն, ապա ոչ մի հակասություն չի կարող լինել դպրոցի և ընտանիքի միջև: Ծնողների հետ անհրաժեշտ է կազմակերպել քննարկումներ, կարդալ մանկավարժական զեկուցումներ, անցկացնել սեմինարներ։Ծնողներին ընդգրկել դասարանի կառավարման գործընթացին։ Ամուր կապ ստեղծել դպրոցի և ընտանիքի միջև։

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ժամկետը	Կատարողներ
I	<<Բարև դպրոց>> նոր ուստարվա,գիտելիքի,նոր պարտականությունների և կարգուկանոնի մասին:	Սեպտեմբեր	աշակերտ դասվար
II	Աշխատանքային պլանի կազմում, դասագրքերի բաշխում: Ծնողխորհրդի ընտրություն:	Սեպտեմբեր	աշակերտ դասվար
III	Դասարանի ակտիվի ընտրություն: Դասարանում հերթապահության կազմում: Դասարանական անկյունի ձևավորում	Սեպտեմբեր	աշակերտ դասվար
IV	Զրույց նվիրված ՀՀ անկախության օրվան:	Սեպտեմբեր	աշակերտ դասվար
V	Զրույց «Տոնդ շնորհավոր, ուսուցի՛չ» :	Հոկտեմբեր	աշակերտ դասվար
VI	Զրույց «Ծաղիկների դերը մարդկանց կյանքում»:Համալրել դասասենյակը, միջանցքները սենյակային ծաղիկներով և խնամել դրանք:	Հոկտեմբեր	աշակերտ դասվար
VII	Զրույց հանդուրժողականության, ընկերասիրության, բարության, քաղաքավարության կանոնների շուրջ:	Հոկտեմբեր	աշակերտ դասվար
VIII	«Սպորտը առողջություն է»: Անցկացնել սպորտլանդիաներ զուգահեռ դասարանների միջև:	Նոյեմբեր	աշակերտ դասվար
IX	Լավ և վատ արաքներ:Սերմանել սիրո,հարգանքի զգացում շրջապատի,դպրոցի,ուսուցչի հանդեպ:	Նոյեմբեր	աշակերտ դասվար
X	Զրույց «Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում»:	Նոյեմբեր	աշակերտ դասվար
XI	Յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի օրը անցկացնել դասղեկի ժամ և քննարկել շաբաթվա մտահոգող հարցերը:	Նոյեմբեր	աշակերտ դասղեկ

XII	Ովքեր են մեր ընկերները, ինչպես ենք շփվում։Էլեկտրոնային դաս «Բարեկրթություն»։	Նոյեմբեր	աշակերտ դասղեկ
XIII	Ամանորյա լույսեր։ Էլեկտրոնային դաս-ցուցադրում «Ինչպես են նշում Նոր տարին այլ երկրներում»։	Դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
XIV	Դասասենյակի նախապատրաստումը Նոր տարվա։	Դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
XV	I կիսամյակի ամփոփում։ IIկիսամյակում կատարվելիք աշխատանքաշաաշակերտ դասղեկկերտ դասղեկների քննարկում։	Դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
XVI	Բանակի տոն։Զրույց նվիրված հայոց բանակի տոնին։	Հունվար	աշակերտ դասղեկ
XVII	Լավ և վատ արաքներ։Սերմանել սիրո,հարգանքիզգացում շրջապատի,դպրոցի,ուսուցչի հանդեպ	Հունվար	աշակերտ դասղեկ
XVIII	Զրույց «Ինչպես եմ ինձ դրսևորում հասարակական վայրում»։	Փետրվար	աշակերտ դասղեկ
XIX	Հետևողական աշխատանք թույլ սովորող աշակերտների հետ։	Փետրվար	աշակերտ դասղեկ
XX	<<Միայն խոսենք մեր ոսկեղենիկ մայրենիով և նվիրենք գրքեր>> դաս-միջոցառում։	Փետրվար	աշակերտ դասղեկ
XXI	<<Լինել առողջ և ուժեղ>>։Ձևավորել առողջ ապրելակերպ,սովորողները ինքնուրույն կպարզեն՝ինչպես ճիշտ և օգտակար սնվեն։	Մարտ	աշակերտ դասղեկ
XXII	«Մայրության և գեղեցկության տոն»։ Շարադրություն «Իմ մայրիկը» թեմայով։	Մարտ	աշակերտ դասղեկ
XXIII	Հրավիրել ծնողական ժողով, տեղյակ պահել աշակերտների առաջադիմության և կարգապահության մասին։	Մարտ	աշակերտ դասղեկ
XXIV	Ուշադրության կենտրոնում պահել հետ մնացող աշակերտներին։	Մարտ	աշակերտ դասղեկ
XXV	Ակտիվ մասնակցել «Մաքուր Հայաստան ծրագրին՝ մասնակցել և դպրոցական, և քաղաքային շաբաթօրյակներին։	Ապրիլ	աշակերտ դասղեկ

XXVI	Պարտադիր ուսուցման գործընթացի իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին, ծնողական և դպրոցական խորհուրդներին	Ապրիլ	աշակերտ դասղեկ
XXVII	Հիշենք Եղեռնի զոհվածներին և հարգենք նրանց հիշատակը:	Ապրիլ	աշակերտ դասղեկ
XXVIII	Զրույց՝«Ինչպես պահպանել շրջակա միջավայրը»:	Ապրիլ	աշակերտ դասղեկ
XXIX	<< Ասացվածքի պաստառ >> աշակերտներին ծանոթացնել ժողովրդական բանահյուսության միտեսակին՝ ասավածքին և նրանց մեջ զարգացնել բարոյական արժեքներ մարդկանց նկատմամ:Հարգանք, մարդասիրություն:	Ապրիլ	աշակերտ դասղեկ
XXX	Զրույց «Իմ ձեռքբերումները այս ուսումնական տարում»:	Ապրիլ	աշակերտ դասղեկ
XXX1		Մայիս	աշակերտ դասղեկ
XXXII	Ավարտական միջոցառում՝ «Իմ մանկության հրաշալի 4 տարիները» :	Մայիս	աշակերտ դասղեկ
XXXIII	Զրույց «Իմ ձեռքբերումները այս ուսումնական տարում»:	Մայիս	աշակերտ դասղեկ
XXXIV	Տարեվերջյան արդյունքների ամփոփում:	Մայիս	աշակերտ դասղեկ